ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	**Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը**	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
	1	2	3	4
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 20.04.2016 թվական № 01/11-1/12467-16 գրություն	Նախագծով առաջարկվում է սահմանել, որ քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել նաև ցանկացած այլ քրեական գործեր, եթե դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ապահովման անհրաժեշտություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:		
2.	ՀՀ առողջապահության նախարարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի		

	11.04.2016 թվական № ԱՄ/11.1/3748-16 գրություն	Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:		
3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 08.04.2016 թվական № ԱԱ/ՀՄ-2-3/2835-16 գրություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն: Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա: Նախագիծը՝ ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.** բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**		

4.	ՀՀբնապահպանության նախարարություն 13.04.2016 թվական № 1/05.3/10694-16 գրություն	1. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա: 2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա: 3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում: Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:		
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում		

	19.04.2016 թվական № 01/10.2.1/2923-16 գրություն	կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ՝ քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել նաև ցանկացած այլ քրեական գործեր, եթե դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ապահովման անհրաժեշտությունը: Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող: Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝		

		Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է հնարավորություն ընձեռել վարույթ իրականացնող մարմնին միացնել իրենց էությամբ նմանատիպ կամ մեկ վարույթի շրջանակներում առավել հեշտ բացահայտման ենթակա հանցակազմերի հատկանիշներով հարուցված քրեական գործերը՝ ելնելով դրանց փաստական կազմի նմանությունից,* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***		
6.	ՀՀ արդարադատության նախարարություն 07.04.2016 թվական № 14/[77193]-16 գրություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման		

		կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:		
7.	ՀՀ ԿԱ ոստիկանություն 15.04.2016 թվական № 24/876 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
8.	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն 14.04.2016 թվական № 11/227 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
9.	ՀՀ քննչական կոմիտե 18.04.2016 թվական № 05/22/1160-16 գրություն	***<u>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածում կատարվող լրացման՝ Նախագծի 1-րդ հոդվածի վերաբերյալ</u>*** հարկ ենք համարում նշել, որ քրեական գործերի քննության ընթացքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում մեկ վարույթում միացնել մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործեր, որոնց միջև առկա է օբյեկտիվ կապ, կամ գործերի փաստական հանգամանքներից ելնելով՝ նպատակահարմար է դրանք քննել մեկ վարույթում՝ գործի քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու համար:	Չի ընդունվել:	Նախագծով առաջարկվող ձևակերպման մեջ առկա երեք հասկացությունների միասնությունն ինքնին ենթադրում է արդյունավետ քննության ապահովման անհրաժեշտություն, ուստի «արդյունավետության» մասին ուղղակի նշման կարիք պարզապես չկա:

		Ուստի, առաջարկվում է «նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության» բառերը փոխարինել *«նախաքննության լրիվության, բազմակողմանիության, օբյեկտիվության և արդյունավետության»* բառերով: Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել հիշյալ փոփոխությունը:		
10.	ՀՀ վճռաբեկ դատարան 26.04.2016 թվական № ՎԴ-Ե-2708 գրություն	Նախագծով ներկայացվող հիմնավորումները թերի են, մասնավորապես, ամբողջական նշված չեն առաջացող լրացման անհրաժեշտությունը, հիմնավորող հիմնական պատճառները, գործնականում առաջացող այն կոնկրետ խնդիրները, որոնց լուծմանն է այն ուղղված: Բացի այդ, հարկ է նկատել, որ, ըստ էության, գոյություն չունեն նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության հիմնավորման համար կոնկրետ և հստակ չափանիշներ, ուստի քրեական գործերն առանձին դեպքերում կարող են միացվել ը նդհանուր բնույթի գնահատողական դատաղություններով՝ հանգեցնելով նաև անձի իրավունքների և օրինական շահերի խախտմանը:	Չի ընդունվել:	Այն, որ Նախագծով առաջարկվում է վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական գործերի միացման առավել լայն շրջանակ, քան նախատեսում է գործող օրենսդրությունը, դեռևս չի նշանակում, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից հնարավոր է թույլ տրվեն չարաշահումներ՝արդյունքում հանգեցնելով անձի իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Դժվար է պատկերացնել, որ քրեական գործերի միացումը լինի

				ինքնանպատակ, չբխի օբյեկտիվ անհրաժեշտությունից և միտված չլինի նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ապահովմանն ու արդյունավետության բարձրացմանը: Ինչ վերաբերում է քրեական գործերի միացման հստակ չափանիշներ սահմանված չլինելուն՝ հարկ է նկատել, որ Նախագծում ուղղակիորեն նախատեսվում է առնվազն մի քանի չափանիշների միաժամանակյա առկայության անհրաժեշտություն: Նախևառաջ, քրեական գործերի միացումը պետք է պայմանավորված լինի այդ գործերի փաստական հանգամանքներով, այսինքն, մեկ վարույթում կարող են միացվել միայն այնպիսի քրեական գործեր, որոնք իրենց բնույթով, իրավական էությամբ ունեն առարկայական և բովանդակային փոխկապակցվածության բավարար մակարդակ և եթե այդ գործերի

				միացումը անհրաժեշտ է նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ապահովման համար: Ուստի, գտնում ենք, որ քննարկվող դիտողության շրջանակներում արտահայտած դիրքորոշումն ընդունելի չէ:
11.	ՀՀ մարդու իրավունքների պաշտպան 10.05.2016 թվական № 01/13.4/876-16 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
12.	ՀՀ գլխավոր դատախազություն 12.07.2016 թվական № 4892-16 գրություն	Նախագծով նախատեսվում է լրացում կատարել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածում, համաձայն որի՝ քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել ցանկացած քրեական գործեր, եթե դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է նախաքննության լրիվության, բազմակողմանիության և	Չի ընդունվել:	Նախագծով առաջարկվող կարգավորմամբ քրեական գործերի միացումը պետք է բխի օբյեկտիվ անհրաժեշտությունից և հետապնդի հստակ նպատակ: Սա նշանակում է, որ մեկ վարույթում կարող են միացվել միայն այնպիսի քրեական գործեր, որոնք իրենց բնույթով, իրավական

		օբյեկտիվության ապահովման անհրաժեշտություն: Նախ՝ ներկայացված նախագծում առաջարկվող կարգավորման պայմաններում քրեական գործերի միացման հայեցողությունն ամբողջությամբ թողնված է վարույթն իրականացնող մարմնին, քանի որ բացակայում է քրեական գործերի միացման որևէ հստակ չափանիշ: Առաջարկվող պայմանի, այն է՝ նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ապահովման անհրաժեշտության գնահատումը վերապահված է վարույթն իրականացնող մարմնին, ուստի այն կանխորոշող որևէ չափանիշի բացակայության պայմաններում այս պայմանը կարող է դրվել ցանկացած երկու քրեական գործի միացման հիմքում: Մինչդեռ, քրեական գործերի միացման հիմնավորվածությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որոշակիացնել այն չափանիշները, որոնց առկայության դեպքում միայն թույլատրելի կլինի նման միացումը: Քրեական գործերի միացումը, օրինակ, արդարացված կհամարվի այն դեպքում, երբ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չէ, սակայն առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ մի քանի հանցանքներ կատարվել են մեկ անձի կամ		էությամբ ունեն առարկայական և բովանդակային փոխկապակցվա - ծության բավարար մակարդակ, այնպիսի քրեական գործեր, որոնց անջատ քննությունը ոչ միայն չի նպաստի, այլև ընդհակառակը՝ կխոչընդոտի որակյալ և արդյունավետ նախաքննության օրենսդրական պահանջի իրացմանը: Ուստի, հենց վարույթ իրականացնող մարմնի շահերից է բխում, որպեսզի հիմնավորված անհրաժեշտության դեպքում՝ նախաքննության բարձր որակի ապահովման համար, քրեական գործերը միացվեն մեկ վարույթում՝ այդպիսով նպաստելով լրիվ, բազմակողմանի, օբյեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացմանը: Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով նաև վարույթ իրականացնող մարմինների որոշումներիի օրինականության նկատմամբ հսկողության, ինչպես նաև դրանց բողոքարկման

		անձանց խմբի կողմից: Բացի այդ, լրացուցիչ կարգավորման կարիք ունի այն, թե ինչ ընթացակարգով պետք է իրականացվի այս հիմքով քրեական գործերի միացումը, ինչպես պետք է իրականացվի այս որոշման օրինականության ստուգումը, քանի որ եթե գործող օրենսգիրքը սահմանում է քրեական գործերը միացնելու հստակ հիմքեր, ապա, ինչպես նշվեց, Նախագծով առաջարկվող պայմանն ամբողջությամբ թողնվում է քննիչի կամ դատախազի գնահատմանը: Ելնելով վերոնշյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծով չեն սահմանվում քրեական գործերի միացման հստակ հիմքեր և դրանք բացարձակ հայեցողական են, ինչի արդյունքում նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության պատրանքով կարող են միացվել ցանկացած քրեական գործեր՝ գտնում ենք, որ առաջարկվող լրացումն անընդունելի է:		մեխանիզմների առկայության հանգամանքը՝ գտնում ենք, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական գործերի ինքնանպատակ միացման և հնարավոր չարաշահումների վերաբերյալ կանխավարկածն արդարացված չէ:

ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ